Երեխային շաբաթը մի անգամ լողացնում են, որ տևում է 40 օր, իսկ ծծից կտրելու համար ստինքի պտուկների վրայ սխտոր կամ պղպեղ են քսում, երբեմն նաև խաբում, սաստում մինչև որ հետզհետէ վարժելով մոռանում է ծիծ ուտելը։

Երբ երևում է երեխայի առաջին կաթնատամը, ցորեն են խաշում, հատիկ պատրաստում և երեխայի գլխին մի թաշկինակ գցելով՝ ածում են գլխին, ապա բաժանում տան անդամներին։ Եթէ երեխան ուշ է լեզու ելնում, ուխտ են անում։

Orogf: Փէրիայում դեռ գոյութիւն ունի աւանդական «օրօցքը»։ Դա երկու կիսաղեղնաւոր ոտքերի վրայ չորս ուղղահայեաց և հորիզոնական ձողիկներից բաղկացած և վերևից կամարներով ազեղնաւորւած փայտէ շինւածք է, որի մէջ ցանցաձև չանէ հիւսւածքի վրայ փռւած է փոքր բարձիկով անկողինը։ Նորածինը մերկացնում և տարածում են անկողնի վրայ. ապա՝ բազուկները կողքերին կամ կրծքին խաչաձևած՝ «փորլաթը» դնում որովայնի վրայ, ձգում վերմակը և «փորկապով» կապելուց յետոյ, սկսում են օրօրել։*

Անուն: Երեխայի անունը սովորաբար գերդաստանի մեծն է ընտրում կամ հայրը և կամ քահանան. ահա ամենագործածական անուններն իրենց կրճատումներով.

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ		ԿԱՆԱՆՑ	
Աբրահամ	— Աբրամ.	Ալմաստ	— Էլմաս.
Արգար	— Արկեար.	Աննա.	
Այվազ.		Արեգնազան	— Արեգնազ.
Անդրէաս	— Անդուլ, Անդրաս.	Բալասան.	
Աշոտ.		Գիւղէլ	— Կէօղէլ.
Առաքել	— Առագել, Ըռաքել. Գալօ.	Եղիսաբեթ	— Եղիսա, Աղսաբեթ.
Աստուածատուր-Աստատուր. Ալլահվէրդի, Խուտավէրդի.		Թագուհի	— Թագուլ.
Արշամ.		Խաչխաթուն	— Խաչալ.
Արամայիս.		Խաթուն.	
Արտաշէս	— Արտազ.	Խաթայի.	
Արիստակէս	— Արստակ.	Ծաղիկ	— Ծաղկուլ.
		Կատարինէ	— Կատան, Տատան.

* Փէրիացի մայրը չափազանց նախասպաշաբւած մի կին է. նա գաւակին «չար աչքից» հեռու պահելու համար օրօրոցի վրայ յուռութներ է կապում, մազերին կապոյտ-կանաչ ուլունքներ կախում, դանակով «խաչաձև» աղօթում հայլն։